**ՄՈՐ ԵՎ ՄԱՆԿԱՆ ԱՎՍՏՐԻԱԿԱՆ ՀԻՎԱՆԴԱՆՈՑ**
**ÖSTERREICHISCHES MUTTER KIND ZENTRUM**

08.04.2014թ..
ք. Գյումրի

«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/16» ծածկագրով
շրջանակային համաձայնագրերի միջոցով
գնում կատարելու ընթացակարգի հնարավոր
մասնակիցների ղեկավարներին

«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/16» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում <<Գյումրու մոր և մանկան ավստրիական հիվանդանոց>> ՓԲԸ կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռք բերելու Գնումների աջակցման կենտրոնի և կազմակերպությունների միջև կնքված N ՇՀԱՊՁԲ-11/16 գնման նախնական պայմանագրի և N 1 հավելվածում նշված չափաբաժնով նախատեսված ապրանքները: Մատակարարման պայմաններն են՝ ապրանքի մատակարարումը պատվիրատուին կատարվում է մատակարարի կողմից:

<<Գյումրու մոր և մանկան ավստրիական հիվանդանոց>> ՓԲԸ-ի կողմից կազմակերպված ընթացակարգի ծածկագիրն է **«ՇՄԳՄՄԱՀ- ՇՀԱՊՁԲ-11/16-3»:**

Հայտնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության հայտն անհրաժեշտ է ներկայացնել ք.Գյումրի, Գ. Նժդեհ 5 հասցեով մինչև 2014թ. ապրիլի 18-ը, ժամը 11:00-ը:

Ընթացակարգի հայտերը ստանում և հայտերը գրանցամատյանում գրանցում է գնումների համակարգող՝ Նվարդ Բադալյանը: Հայտերը գրանցվում են գրանցամատյանում՝ ըստ ստացման հերթականության, ծրարի վրա նշելով գրանցման համարը, կազմակերպության անվանումը, օրը և ժամը:

Հայտերը կբացվեն <<Գյումրու մոր և մանկան ավստրիական հիվանդանոց>> ՓԲԸ-ի շենքում, ք.Գյումրի, Գ. Նժդեհ 5 հասցե, նիստերի դահլիճում, 2014թ. ապրիլի 18-ին, ժամը 11:00-ին:

Հայտը ներառում է շրջանակային համաձայնագիր կնքած կազմակերպության կողմից հաստատված գնման ընթացակարգին մասնակցելու մասին դիմումը և գնային առաջարկը: Հայտն անհրաժեշտ է ներկայացնել «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/16» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված կարգով:

Առաջարկված նվազագույն գների հավասարության դեպքում կամ եթե հրավերին համապատասխանող հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցները՝ առաջին և հաջորդաբար տեղերն զբաղեցրած մասնակիցներին որոշելու նպատակով հանձնաժողովի նիստում առաջարկված գների նվազեցման նպատակով ոչ գնային պայմանները բավարարող գնահատված բոլոր մասնակիցների հետ վարվում են միաժամանակյա բանակցություններ:

Եթե, հրամանով հաստատված ցանկում ներառված կոնկրետ գնման գործընթացի մասով, Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտով նախատեսված է, որ մասնակիցը Օրենքի 5-րդ հոդվածով նախատեսված պահանջներին իր տվյալների համապատասխանության ապահովման և/կամ գնահատման համար պետք է պատվիրատուին ներկայացնի այլ (լրացուցիչ) փաստաթղթեր և/կամ տվյալներ, ապա նշված փաստաթղթերը և կամ տվյալները պատվիրատուին ներկայացնում է ընտրված մասնակիցը՝ մինչև կարգի 110-րդ 7–րդ մասով սահմանված կարգով պայմանագրի կնքումը:

Կից ներկայացվում են կնքվելիք պայմանագրի նախագիծը հավելվածներով:

Առդիր՝ 12 էջ:

**<<Գյումրու մոր և մանկան ավստրիական հիվանդանոց>> ՓԲԸ տնօրեն ՝ / Ա. Կուրղինյան**

Կատ. Ն.Բաղալյան
հեռ. 055 715100